

ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հոմանշությունը բնորոշ է համարվում բոլոր լեզուներին և դիտվում որպես լեզվի զարգացածության ցուցանիշ¹: Հոմանշային հարաբերությունների խնդիրն արդի լեզվաբանության կարևորագույններից է. ինչպես նշվում է լեզվաբանական գրականության մեջ, արդի փուլում նոր գիտական հոլովություն հետազոտողները «կրկին ու կրկին վերադառնում են հոմանշային հարաբերությունների վերլուծությանը»², պայմանավորված այն հանգամանքով, որ «հոմանշությունը ձևավորում է լեզվի փիլիսոփայական կողմը»³: Եվ այս առումով հատկանշական են միջնադարի հայ քերականների՝ հոմանշային հարաբերություններին վերաբերող մոտեցումները նաև այդ ժամանակաշրջանում ստեղծված հոմանիշների ձեռագիր բառարանների և բառաշարքերի կազմության սկզբունքները բացահայտելու տեսանկյունից:

Հայ գիտական գրականության մեջ հայերենի հոմանիշների տեսությանը, դրանց դասակարգմանը, ստեղծման աղբյուրներին, ոճական կիրառություններին առնչվող խնդիրներին անդրադարձել է Աշոտ Սուքիասյանը: Նրա վկայությամբ՝ *հոմանիշ* հասկացության համար հայերենում «տարբեր ժամանակներում գործածվել են մի քանի տերմիններ»⁴: Լեզվաբանը, անհրաժեշտ համարելով տեղեկություններ հաղորդել «հին և նոր շրջանի հոմանիշների վերաբերյալ, մեր ժամանակների որոշ մասնագետների մի քանի կարծիքների, ինչպես նաև ժամանակակից լեզվաբանության մի երկու դպրոցի տեսությունների մասին», ներկայացնում է նաև «հոմանիշների հարցերը»՝ հայ քերականների գնահատությամբ: Նա, սակայն, չի անդրադառնում ստորև ներկայացվող քերականների մեկնություններին, այլ նշում է միայն, որ «հայ իրականության մեջ հոմանիշների մասին առաջին դատողությունները պատկանում են Դիոնիսիոս Թրակացու հայ մեկնիչներին՝ Ստեփանոս Սյունեցուն և Անանունին»⁵: Աշոտ Սուքիասյանը նաև վկայակոչում է Արսեն Բագրատունու և Միքայել Մալլաթյանի քերականությունները՝ արձանագրելով. «Հետագայում, 19-րդ դարի առաջին կեսից սկսած՝ հայ քերականները համառոտիվ խոսում են հոմանիշների մասին կամ պարզունակ կերպով սահմանում են «հոմանիշ, նույնանշան կամ փաղանուն», այսինքն՝ հոմանիշ բառերը, կամ էլ պարզապես գործնական նպատակներով իրենց քերականություններին կցում են հոմանիշների բառախմբեր կամ շարքեր»⁶:

¹ Տե՛ս <https://bit.ly/41EqJp7>

² Шумилова А. А. Лексическая синонимия: Традиционное и когнитивное видение вопроса // Вестник Челябинского государственного университета. 2009, № 22 (160). Филология. Искусствоведение. Вып. 33, с. 140-148 (<https://bit.ly/41mh8mY>).

³ Նույն տեղում:

⁴ Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 30-33:

⁵ Նույն տեղում, էջ 12-13:

⁶ Նույն տեղում, նաև էջ 33:

Բանալի բառեր – *փաղանուն, հոմանիշ, զույգ անուն, քերական, մեկնիչ, իմաստասեր, հասկացություն*

Միջնադարի հայ քերականները *հոմանիշ* հասկացության համար կիրառել են *փաղանուն*-ը⁷ մեկնելով այն «ըստ իմաստասիրաց» (փիլիսոփաների) և «ըստ քերթողաց» (քերականների)⁸:

Նիկողայոս Ադոնցի քննական հավաստումով՝ Դիոնիսիոս Թրակացին *փաղանուն*-ը վերագրում է ("приписывается") ոչ թե փիլիսոփաներին, այլ քերականներին՝ այն բացատրելով որպես *բազմանուն*։ «Փաղանուն է որ ի զանազան անուանս զնոյն ցուցանէ. որզոն խաղ, դալապր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան»⁹: Ըստ նրա՝ Դավիթ փիլիսոփան *հոմանիշ*-ը մեկնելիս ("при толковании синонима") բառի քերականական իմաստը տարբերակում է փիլիսոփայականից, ինչպես և վարվում են հույն մեկնիչները. նրա վկայությամբ՝ ըստ հույն քերականների փիլիսոփաները (այսինքն՝ պերիպատետիկները) հոմանիշն անվանում են *բազմանուն* (πολυώνυμα)¹⁰: Դավիթ փիլիսոփան, Նիկողայոս Ադոնցի վկայությամբ, ընդհակառակը, *բազմանուն*-ը վերագրում է քերականներին՝ նկատի ունենալով, որ միևնույն իրը տարբեր անուններով է բարդվում ("<одна и та же> вещь нагромождена многими именами"), մինչ փիլիսոփաները կոչում են փաղանուն, քանի որ "...животное заключает в себя названия многихъ естествъ"¹¹ (այսինքն՝ նույն սեռի մեջ մտնող բազմաթիվ տեսակների անունները): Ասել է՝ այն, ինչ արձանագրել են «Արուեստ Դիոնիսեայ Քերականի» աշխատության հայ մեկնիչներից Գրիգոր Մագիստրոսը, հետագայում՝ Եսայի Նչեցին, Հովհաննես Երզնկացին՝ «... փաղանուն ըստ քերթողացն ասի բազմանուն իբրու թէ իրն բազում անուանս ունի զիրեաւ բարդեալ: Իսկ ըստ իմաստասիրացն է փաղանուն, զի կենդանին զբազում բնութեանց անուանս փաղեաց»¹²:

Դարձյալ Նիկողայոս Ադոնցի քննությամբ՝ «Արուեստ Դիոնիսեայ Քերականի» աշխատության հայ մեկնիչներից Անանուն Մեկնիչը, Ստեփաննոս Սյունեցին, ընդունելով Թրակացու բացատրությունը և հետևե-

⁷ Փաղանունը պատճենում է հունարենից և համահավասարաթեք է հոմանիշին, նույնանիշին. տե՛ս **Ա. Սուրադյան**, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971, էջ 225:

⁸ Այս մոտեցումները դրսևորվել են նաև հետագայում. ըստ Ա. Սուքիասյանի՝ հոմանիշները «մերթ լեզվաբանական, մերթ տրամաբանական տեսանկյունով» քննվել են նաև «սովետական լեզվաբանության մեջ». մանրամասն տե՛ս **Ա. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 49:

⁹ **Н. Адони**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроградъ, 1915, с. 19.

¹⁰ Տե՛ս նույն տեղը՝ էջ CLXX:

¹¹ Նույն տեղում, նաև էջ 109:

¹² **Լ. Խաչերեան**, Գր. Պահլաունի Մագիստրոս. Կեանքն ու գործունեությունը, Լոս Անճելըս, 1987, էջ 421: **Եսայի Նչեցի**, Վերլուծություն քերականութեան, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Եր., 1966, էջ 121: **Յովհ. Երզնկացի**, Հաւարումն Մեկնութեան քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելըս, 1983, էջ 217:

լով դրան, պարզաբանում են. «Փաղանուն կոչի, յորժամ մի իր գոլով, բազում անուամբ անուանի, որպէս՝ սուսեր, որ կոչի դալապր, խարբ, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան»¹³, «... փաղանունք ասին, որ են գոյգ անուանք. անիւ եւ ճղուղ, առեղ եւ աւարտք, հեւան եւ դանդանք, կունդք եւ ականոց, հեց եւ բոյթ, կապերտ եւ գորգ, ձի եւ դզի, երամակապան եւ կուտպան, բիր եւ մահակ, որոց բնութիւն մի եւ անուանք այլ»¹⁴:

Այս վերջին բնորոշումով նույն օրինակներն է քաղում Գրիգոր Մագիստրոսը¹⁵:

Մեկնիչներից առանձնանում է Համամ Արևելցին, որը *փաղանուն*-ը մեկնում է ըստ իմաստասիրաց՝ «Եւ փաղանուն եմ ի յոլովակի բաղադրոցն որ յիս փաղինն իմացմանցն ձեւք»¹⁶, գտնելով, որ այն հաճախ միավորում է հասկացությունների տեսակները:

Իրենց մեկնություն-վերլուծություններում Եսայի Նչեցին, Հովհաննես Երզնկացին, Հովհաննես Ծործորեցին *փաղանուն*-ը պարզաբանում են քերականների տեսանկյունից: Ինչպէս նշում է Եսայի Նչեցին, «այլ մեք զքերդողացն տեսցուք աստ, որ փաղանուն ասեն զայն, որ մի իր գոլով բազում անուանս ունի եւ ի զանազան անուանս գնոյն իրս ցուցանէ, որպէս՝ սուսեր, զի կոչի «խարբ», «դալապր», «մարտացու», «վաղակաւոր», «սուսեր», «նրան» և այլ եւս»¹⁷: Այս կարծիքին են նաև Հովհաննես Երզնկացին («Այլ զքերթողացն տեսցուք աստ, զի փաղանուն ասի, որ անուամբ այլեւայլ, եւ բնութեամբ՝ մի. եւ մի իր գոլով՝ բազում անուամբ անուանի...»¹⁸) և Հովհաննես Ծործորեցին («... առ քերդողս փաղանուն «բազմանուն» լսի, իբրու թէ մի իրն բազում անուանս ունի զիրեւա բարդեալ...»¹⁹)՝ դարձյալ քաղելով նույն օրինակները:

Ուշագրավ է Եսայի Նչեցու հաջորդ դիտարկումը. «Քանզի ի մերում լեզուիս այսպիսի ոչ ունի անունս, քանզի փաղանուն ասին, որ է «գուգանունք»...», որոց բնութիւնք նոյնք, եւ անուանք՝ այլեւայլք»²⁰, որը Ստեփանոս Սյունեցու՝ արդեն հիշատակված մեկնաբանության կրկնությունն է, այն է՝ «... փաղանունք ասին, որ են գոյգ անուանք ...»: Հովհաննես Ծործորեցին էլ, *փաղանուն*-ը իբրև *բազմանուն* բնորոշելով, հավելում է. «Արդ՝ այս ի մերս ոչ այսպէս անուանի, այլ են ոմանք փաղանունք... որոց բնութիւնք նոյնք, եւ անուանք՝ այլ»²¹:

Վարդան Արևելցին փաղանունն իմաստավորելիս շեշտում է. «Ճարտասանի գործ է այս եւ զաւրութիւն, որ զմէկ իրն բազում անուամբ

¹³ **Н. Адопц**, նշվ. աշխ., էջ 144:

¹⁴ Նույն տեղում, էջ 209:

¹⁵ Տե՛ս **Լ. Խաչերեան**, նշվ. աշխ., էջ 433:

¹⁶ **Н. Адопц**, նշվ. աշխ., էջ 259:

¹⁷ **Եսայի Նչեցի**, նշվ. աշխ., էջ 121:

¹⁸ **Յովհ. Երզնկացի**, նշվ. աշխ., էջ 217:

¹⁹ **Յովհ. Ծործորեցի**, Համառատ տեսութիւն քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելըս, 1984, էջ 222:

²⁰ **Եսայի Նչեցի**, նշվ. աշխ., էջ 121:

²¹ **Յովհ. Ծործորեցի**, նշվ. աշխ., էջ 222:

ցուցանել եւ հարուստ, զոր քերթաւորն «բազմանուն» ասացին...»²²:

Հանրահայտ է, որ քերականները ուսուցչապետել են կրթական օջախներում, եղել են գիտակ ուսուցչության պահանջներին ու դժվարություններին: Ըստ այդմ էլ Վարդան Արևելցու մեկնությունն ի մասնավորի արժեքավոր է՝ հասկանալու համար հոմանիշների բառարանների նպատակն ու անհրաժեշտությունը: Էապես հենց այդ էլ ակնարկում է Հայկ Ամալյանը՝ «Հանդես բանաստեղծաց»-ը համարելով «... նորավարժների, երիտասարդ բանաստեղծների, հավանաբար ճարտասանների գեղարվեստական խոսքի կատարելագործմանն ու բառապաշարի հարստացմանը նպաստող բառարան»²³:

Հովհաննես Քոնեցու մեկնությամբ՝ անվան տեսակներից «յատկականն» ու «հասարակականը» երկուսն են՝ «եզանուն եւ բազմանուն. եզանուն, որ ասի շուն եւ բազմանուն, որ ասի թուր, սուսեր, նրան, դալապր, խաղ, վաղակաւոր»²⁴. ըստ այդմ՝ բազմանունները, վերաբերելով հասարակ անվանը²⁵, միևնույն առարկային տրված անուններն են:

Միմեոն Ջուղայեցին, Հրաչիկ Միրզոյանի հավաստմամբ, փաղանվանն անդրադառնում է *հասկացություն*-ը տրամաբանորեն քննելիս: Նա նշում է, որ Միմեոն Ջուղայեցու կարծիքով՝ «... փաղանունները «անվան բանով» բովանդակությամբ ունեն միևնույն նշանակությունը. «Փաղանուն է՝ յորոյ նշանակութենէն իր իմն ըմբոնի պարզաբար և ենթագրի, և նշանակեալքն նովաւ ըստ անուան բանի են նոյն ...»²⁶:

Բաղդասար Դպիրը, Գևորգ Չախուկյանի վկայությամբ, համանիշ բառերն²⁷ անվանում է «բազմաձայններ». «Ըստ միևնույն նշանակության՝ մեկ թե մի քանի բառաձևով արտահայտվելու տարբերվում են «միաձայն» և «բազմաձայն» (համանիշ) բառեր. «բազմաձայնները» հակադրվում են «բազմանշաններին». «Եւ տես, զի բազմանշանքն և բազմաձայնքն հակադրեցեալք են, վասնզի միոյն ձայնը մի և նշանակութիւն այլ և այլ և միևնոյն նշանակութիւնն մի և ձայնն այլ և այլ»²⁸:

Դավիթ Ձեյթունցու մեկնությունն առավել մանրամասն է, և ինչպես նկատել են Գևորգ Չախուկյանը և քննական բնագիրն աշխատասիրած Երվանդ Մելքոնյանը, «Ձեյթունցին պարզապես որոշ տեսակների բացատրությունը տվել է կարճ, բայց և սպառիչ»²⁹, շատ դեպքերում ցուցա-

²² Վարդան Արևելցի, Մեկնութիւն Քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Եր., 1972, էջ 116:

²³ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XVդդ.), Եր., 1966, էջ 123:

²⁴ Յովհ. Քոնեցի, Համառօտ հուարքումն յաղագս քերականի, Եր., 1977, էջ 168: Քոնեցու երկը, ըստ հետազոտողների, առավել մոտ է հայերենի՝ «հունա-լատինատիպ անվանումով» հայտնի քերականություններին. տե՛ս նշվ. աշխ., էջ 140:

²⁵ Այսպիսի մի ակնարկ՝ «...Փաղանուն՝ հասարակաց», ունի Համամ Արևելցին. տե՛ս Խ. Աճօռ, նշվ. աշխ., էջ 261:

²⁶ Հ. Միրզոյան, Միմեոն Ջուղայեցի, Եր., 1971, էջ 161:

²⁷ Հմմտ. Մ. Աբեղյան, Երկեր, հտ. 2, Եր., 1974, էջ 130:

²⁸ Գ. Չախուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 269:

²⁹ Դավիթ Ձեյթունցի, Մեկնութիւն Քերականի, աշխ.-մբ Եր. Մելքոնյանի, Եր., 1981, էջ 42:

բերելով ինքնություն մոտեցում³⁰. այսպես՝ «Փաղանուն ըստ քերթողացն ասի բազմանուն, իբրու թէ մի իրն, որ զբազում անուանս ունի ընդ իւրեալ բարդեալ: Իսկ ըստ իմաստասիրացն է փաղանուն, զի կենդանին զբազում անուանս փաղեաց, որգոն այլեայլ անուամբ կենդանի նշանակել, որպես՝ հրեշտակ, մարդ, ձի, եգ, արծուի, ճնճղուկ եւ այլ տեսակք կենդանոյն, զի տոքա զանազան անուամբ զկենդանին յայտնեն: Այլ մեք զքերթողացն տեսցուք աստ, զի փաղանուն ասի, որ անուամբ այլեայլ եւ բնութեամբ մի իր գոլով բազում անուամբ անուանի, որպէս՝ սուսերն, զի կոչի խաղ, խարբ, դալապր, մարտացու, վաղակաւոր, նրան, եւ եւս անիւ, ճղուղ, աւարտ՝ յանգ, վերջ, կապերտ՝ եւ գորգ, օթոց, կրկնոց, ձորձ, վիռոն, բիր՝ եւ մահակ, գաւազան, որոց բնութիւնք եւ իր մի եւ անուանք այլք»³¹:

Որքան էլ հայ քերականները հետևողականորեն կրկնել են Թրակացուն, այդուհանդերձ, Էդուարդ Աղայանը, չթերագնահատելով նրանց դերը, արձանագրում է, որ «... նրանք են եղել հայերենի քերականության նախատիպարները, ... նրանց հիման վրա է, որ հետագայում ստեղծվել են փոքրիշատե ինքնություն քերականություններ»³²՝ պահպանելով տերմինների մեծ մասը, անգամ անփոփոխ թողնելով որոշ սահմանումներ:

Եվ սա է պատճառը, որ, ինչպես նշում է Աշոտ Սուքիասյանը, «... հեղինակները հոմանիշների բառարանի կազմության և հոմանիշների տեսության հարցերում գտնվում են իրենց ժամանակաշրջանի մակարդակի վրա»³³:

Ի հաստատումն այս մոտեցման՝ անհրաժեշտ է նշել, որ, ըստ հետազոտողների, փիլիսոփայական երկերը, օրինակ, ժամանակաշրջանի պարտադրանքով *համապարփակ* բնույթ են ունեցել՝ ներառելով փիլիսոփայականը, աստվածաբանականը, տրամաբանականը, հոետորականը, լեզվականը, պատմականը և այլն՝ դրանցից որևէ մեկի գերակշռությամբ³⁴:

Հարկ է, թերևս, նաև հավելել, որ ըստ Մեսրոպ Մաշտոցի անվան

³⁰ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V–XV), Եր., 1954, էջ 336:

³¹ Նույն տեղում, էջ 123-124: Թերևս հարկ է նշել, որ *փաղանուն*-ը «բազմանուն» բացատրությամբ առկա է XVI դարից ավանդված ՄՄՁ № 2372-ում «Մեկնութիւն բառից քերականին» երկասիրության մեջ (5բ): *Փաղանուն*-ը իբրև «բազմանուն» է բացատրվում նաև XVI դարից ավանդված ՄՄՁ № 538-ի Dictionarium հատվածում (67բ), Երեմիա Մեղրեցու բառգրքում. տե՛ս Բառգիրք հայոց, քնական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի, Եր., 1975, էջ 322: Հատկանշական է նաև, որ XIV–XVII դդ. հայերեն ձեռագիր քերականություններում չեն հիշատակվում *փաղանուն*-ը, *բազմանուն*-ը, *բազմաձայն*-ը, *համանիշ*-ը. տե՛ս **Տ. Մանուկյան**, Լեզվաբանական տերմինները ԺԴ-ԺԷ դդ. հայերեն ձեռագիր քերականական աշխատություններում, թեկն. ատեն., Եր., 2017: <https://bit.ly/41d6caP>

³² **Էդ. Աղայան**, Հայ լեզվաբանության պատմություն (Սկզբից մինչև մեր օրերը), հտ. 1, Եր., 1958, էջ 85–86:

³³ **Ա. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 5:

³⁴ Տե՛ս **Լ. Խաչերյան**, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII–XIV դդ.), Եր., 1973, էջ 104:

Մատենադարանի ձեռագրացուցակների՝ XVIII դարից ավանդված ՄՄՁ № 3110-ի բառարանի (75ա-112ա) «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթէոսի վ. Բառգիրք *հոմանիշ բառից*»³⁵ (ընդգծ.՝ Ն. Հ.) խորագիրը հուշում է, որ XVIII դարում³⁶ արդեն գործածվում է արդի հայերենում լայնորեն կիրառվող *հոմանիշ* եզրը: Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներում առկա են նաև «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեան մերոց տառից» խորագրով ձեռագիր բառարաններ: Ուստի կարելի է հավանական համարել, որ *նոյնանշան* եզրը տարբերակվում է հենց այս դարից՝ նաև ճշտելով, որ «նոյնանշան բառ»-ն առաջինը կիրառել է Մխիթար Սեբաստացին՝ ոչ միայն *փաղանուն*-ը բացատրելիս նշելով՝ «... ըստ քերականաց փաղանուն կոչին փաղանշան անուանք, այսինքն այնքիկ, որք զանազան ձայնի զնոյն նշանակեն, յորմէ և կոչին նոյնանշանք ...»³⁷, այլև «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառն նոյնանշան բառից յարադրութեամբ» աշխատության մեջ³⁸:

Հատկանշական է, որ XIX դարում հրատարակված բառարանների տվյալներով՝ առկա են *փաղանուն*-ի հետևյալ բացատրությունները: Մանվել Ջախջախյանն այն մեկնաբանում է քերականների նման («Փաղանուն ասի որպէս սուսեր՝ կոչի խարբ նրան, և բիր՝ մահակ, որոց բնութիւն մի է և անուանք այլք»³⁹), Աղեքսանդր Խոլոպաբաշյանը և Գրիգոր Փեշտրմալճյանը *փաղանուն*-ը բացատրում են որպէս «նոյն նշանակությունն ունեցող» բառեր՝ «**Փաղանուն....** *Единозначный, синонимъ*»⁴⁰ (ընդգծ.՝ Ն. Հ.), «**Փաղանուն, // տե՛ս ի վերոյ Փաղանշան....** այն՝ որ նոյն է նշանակութեամբ. համանշան. նոյնանշան, որպիսին են բառք տիպար, տիպ. սուր, սուսեր, և այլն»⁴¹: Մանվել Ջախջախյանը նույն բացատրությունն է տալիս *նոյնանշան*-ին. «*Նոյնանշան զնոյն նշանակութիւն ունող: - բառք. *Sinónimo*» (ՋԲ, էջ 1082. աստղանիշը հուշում է, որ այն «նոր բառ» է (տե՛ս ՋԲ, էջ 25)): *Հոմանիշ*-ի հաջորդ հիշատակությունը Սամուել Գանթարյանինն է՝ *Synonyme* բառն իբրև «համա-

³⁵ Պահպանվում է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

³⁶ Ըստ հետազոտողների՝ «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները XII դ. ընդօրինակություններ են, հետևաբար ենթադրելի է, որ XVIII դարից ավանդվածները նույնպէս կարող են վերաբերել «ավելի վաղ շրջանի»:

³⁷ Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ սեբաստացոյ, Վենետիկ, 1749, էջ 1163 (1230). փակագծերում նշվում է բառարանի PDF ձևաչափով տարբերակի էջը:

³⁸ Այն հրատարակվել է Մխիթար Սեբաստացու մահվանից հետո՝ 1769 թ., թեև ըստ «Լեզվաբանական բառարան»-ի «նոյնանշան բառեր» «տերմինի առաջին անգամ (կամ համեմատաբար վաղ) գործածողը» Գ. Ավետիքյանն է (1750-1827 թթ.). տե՛ս **Հ. Պետրոսյան, Մ. Գալստյան, Թ. Ղարազոյսյան**, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ VI, 239:

³⁹ Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան (այտուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 1422:

⁴⁰ Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Ա. Աղեքսանդրի Մակարեան Խոլոպաբաշեանց, հտ. II, Մոսկով, 1838, էջ 465:

⁴¹ Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտրմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի, հտ. II, Կ.Պօլիս, 1846, էջ 847-848:

նուն. հոմանիշ» բացատրելիս⁴²: Միմոն Գաբամաճյանը *հոմանիշ*-ը հիշատակում է «ուրիշ բառի մը ճշդի կամ գրեթե նոյն նշանակութիւն ունեցող բառ. *հկնչ*. Հականիշ. Տ. Փաղանուն» բացատրությամբ և աստղանիշով⁴³ իբրև ծանոթություն նշելով, որ «բառերու առջեւ դրուած աստղանիշը կը ցուցնէ նոյն բառերուն նոր շինուած ըլլալը» (ԳՆԲՀԼ, էջ Ը):

Այսպիսով՝ միջնադարի հայ քերականները որոշակիորեն (փոքրինչ տարբեր որակումներով) միակարծիք են՝ *փաղանուն* համարելով միևնույն հասկացությունը ցույց տվող, տարբեր արտասանություն ունեցող բառերը: Ասել է՝ հոմանիշ են դիտվել ու համարվել երևույթը, իրողությունը, առարկան համակողմանի, բազմակողմանի բնութագրող բառերն առանց իմաստային սահմանափակման կամ «իմաստային-գործառական այլևայլ առնչակցությունների»⁴⁴ տարբերակման, էթե համեմատվեն հետագայում առանձնացվող բացարձակ, լրիվ, մասնակի հոմանիշները:

НАЗИК ОГАНЕСЯН – Вопросы синонимии в трудах армянских грамматиков средневековья. – Синонимия считается показателем развитости языка, и естественно свойственна всем языкам. Проблема синонимии является одной из важнейших в современном языкознании: как отмечается в лингвистической литературе, на современном этапе в новой научной парадигме исследователи вновь и вновь возвращаются к анализу синонимичных отношений. Это обусловлено тем, что синонимия составляет философскую сторону языка. И в этом смысле характерны подходы армянских грамматиков средневековья к проблеме с точки зрения уточнения принципов составления созданных в тот период рукописных словарей синонимов и их синонимичных рядов.

В трудах армянских грамматиков средневековья для понятия "синоним" использовался термин «сослов», который является калькой из греческого языка, а понятие «синонимии» армянские грамматик объясняют основываясь на учении философов и грамматиков. Армянские толкователи «Искусства грамматики» Дионисия Фракийского (Давид Философ, Григор Магистрос, Есаи Нчеци, Ованес Ерзнкаци и др.), различая грамматические и философские значения слова, отмечают, что грамматик именуют «синоним» «многословием», которым называют один и тот же предмет различными словами, а философы - «сословами», которые являются наименованиями различных однородных понятий. Имея небольшие разногласия в определении, армянские грамматик средневековья единодушно считают, что синонимами являются слова, всесторонне характеризующие предмет, явление без семантического ограничения или разграничения семантико-функциональных отношений.

Ключевые слова: синоним, сослов, двойное имя, грамматика, толкователь, философ, понятие

⁴² Բառարան գաղղիերէն-հայերէն-տաճկերէն, աշխատասիրեաց Հ. Սամուէլ վ. Գանթարեան, Վենետիկ, 1886, էջ 1129-1130:

⁴³ **Ս. Գաբամաճյան**, Նոր բառագիրք հայերէն լեզուի (այսուհետև՝ ԳՆԲՀԼ), Կ.Պօլիս, 1910, էջ 833:

⁴⁴ **Հ. Պետրոսյան**, Հայերէնագիտական բառարան, Եր., 1987, էջ 419:

NAZIK HOVHANNISYAN – *Issues of Synonymy in the Works of Armenian Grammarians of the Middle Ages.* – Synonymy is considered as an indicator of the development of a language, and is naturally characteristic of all languages. The problem of synonymy is one of the most important in modern linguistics: as noted in the linguistic literature, at the present stage in the new scientific paradigm, researchers again and again return to the analysis of synonymous relations. This is due to the fact that synonymy is the philosophical side of the language. And in this sense, the approaches of the Armenian grammarians of the Middle Ages to the problem are characteristic from the point of view of clarifying the principles for compiling the handwritten dictionaries of synonyms (and their synonymic rows) created at that time.

In the works of the Armenian grammarians of the Middle Ages, the term "estates" was used for the concept of "synonym", which is a literal translation from the Greek language, and the concept of "synonymy" has been explained based on the teachings of philosophers and grammarians. The Armenian interpreters of "The Art of Grammar" by Dionysius of Thrace (David the Philosopher, Grigor Magistros, Yesai Nchetsi, Hovhannes Yerznkatsi and others), distinguishing the grammatical and philosophical meanings of the word, note that grammarians call "synonym" "verbosity", which is called the same subject in various words, and philosophers - "estates", which are the names of various homogeneous concepts. Having little disagreement regarding the definition, Armenian grammarians of the Middle Ages unanimously believe that synonyms are words that comprehensively characterize an object, a phenomenon without semantic restriction or differentiation of semantic-functional relations

Key words: *synonym, double name, verbosity, grammarian, interpreter, philosopher, concept*